

« կտակիս մէջ նշանակել եմ տասն հազար ռուբլի իբ-
 « րե. անձեռնմխելի գումար, որի տոկոսիքը իւրաքսն-
 « չիւր տարի պիտի յատկացնուի հայերէն լաւագոյն
 « երկասիրութեանց իբրեւ մրցանակ: Կտակս պիտի կա-
 « տարուի իմ մահից յետոյ:

« Արդ՝ ցանկալով իմ կառուցած թանգարանիս բա-
 « ցումը նշանաւորել որեւէ արժանալիշատակ գործով,
 « ես որոշեցի կտակիս այդ կէտի կատարումը սկսել նոյն
 « իսկ ալժմէնից և տարէցտարի 500 ռուբլի ներկա-
 « յացնել վարչութեան այդ նպատակով:

« Այս մասին ես գրաւոր հաղորդեցի թանգարանի
 « վարչութեան և խնդրեցի խմբագրել պատշաճաւոր
 « կանոնադրութիւն մրցանակաբաշխութեան վերաբե-
 « րեալ և ստանալով Ձերդ Սրբութեան հաստատու-
 « թիւնը՝ գործի ձեռնարկել:

« Իմ այս նոր նուիրաբերութեան մասին պարտք
 « եմ համարում յարգոյաբար զեկուցանել Ձերդ Վեհա-
 « փառութեանն:

Թանգարանի վարչութիւնը ստանալով գրութիւն
 այս մասին՝ փութաց յայտնել պատուական բարերարին
 իւր յատուկ շնորհակալութիւնը և ձեռնարկել մրցանա-
 կաբաշխութեան վերաբերեալ կանոնադրութեան մշակ-
 ման:

«Լումայրի խմբագրութիւնը առաջինը բազմ ունի
 յայտնել այս մասին հասարակութեան և շնորհաւորել
 հայ գրագէտներին գրականութեան դիւրութիւն ընծա-
 յող այս նոր օժանդակութեան համար:

ՄԻ ԲԱՅՍՏՐՈՒԹԻՒՆ

1896 թուականից, «Լումայրի հրատարակութեան
 հետ միատեղ սկսելով հրատարակել հայ նշանաւոր գոր-

Ծիչներէց մէկի՝ ուսուցչապետ Ստեփաննոս Նազարեան-
ցի բազմաթիւ գրաբար և աշխարհաբար նամակները,
այս համարում մենք տալիս ենք մեզ մօտ գտնուած
նոյնանման նիւթերի վերջին մնացորդը: Այդ առիթով
մենք ստիպուած ենք մի բացատրութիւն տալ ընթեր-
ցող հասարակութեան:

Ինչպէս իւր ժամանակին էլ յայտնել էինք «Լու-
մար»ի էջերում, այդ նամակներէց բոլոր գրաբարների
իսկականները մենք ստացել էինք Պ.-Բուրգ մեր մի
բարեկամից, բոլոր աշխարհաբարների պատճէնները պ.
Ս. Լիսիցեանից, իսկ երկու նամակի պատճէնները՝ Բա-
գուի աւագերէց բարձր. Տ. Խորէն Միրզաբէգեանից,
վերջինիս իսկական ձեռքով արտագրուած:

Այդ բոլոր նամակները նոյնութեամբ և անփոփոխ
տպագրուեցան «Լումար»ի մէջ, առանց ուշք դարձնե-
լու նոցա բովանդակութեան, համարելով այդ բոլորը
անհրաժեշտ մեծանուն գրագէտի ապագայ կենսագրողի
համար:

Վերջին նամակներէց մէկը վերաբերում էր դադա-
րած «Մեղու Հայաստան» լրագրին և հանգ. խմբագիր
Գրիգոր Արծրունուն:

Այս նամակը լոյս տեսնելուց յետոյ անմիջապէս
«Մշակ»ի մէջ երևեցաւ մի նկատողութիւն, թէ մենք
փոխանակ «Սենեքերիմ Արծրունու» տպել ենք «Գրիգոր
Արծրունի» բառերը, և ընդ նմին մեր հասցէին ուղ-
ղուած այն սովորական համեմունքները, որոնց սովոր
ենք երկար տարիների ընթացքում լսել «Մշակ»ից:

Մեզ մնում էր միակ մի ելք այս ծանր մեկա-
դրանքը փարատելու մեզանից. պէտք էր Ստեփաննոս
Նազարեանցի իսկական նամակը լուսատիպով հանել և
«Լումար»ի միջոցով ներկայացնել ընթերցող հասարակու-
թեան, ապացուցանելու, որ փաստեր լեզաշրջելով ու-

րիշներն երեսը աղտոտելու հարկն մէջ չենք գտնուել երբէք: Դորա համար առանձին թայֆայ կայ: Եւ անյապաղ մի նամակով դիմելով տ. Խորէն հօրը՝ խնդրեցինք ուղարկել մեզ Ս. Նազարեանի նամակի իսկականը, խոստանալով լուսանկարը հանելուց յետոյ նոյնութեամբ և շնորհակալութեամբ վերադարձնել իրան:

Երախտապարտ ենք տ. հօրը, որ անմիջապէս կատարեց մեր խնդիրը: Հ. Խորէնը ուղարկելով մեզ նամակը՝ խնդրում էր, որ նախ ինքներս տեսնենք, և համոզուենք, թէ նամակում ճշմարիտ որ գրուած է «Գրիգոր» և ոչ «Սեննեքերիմ», և ապա ցոյց փոխ «Մշակ» խմբագրութեան, որ նօքա ևս տեսնեն և համոզուին:

Քանի որ նամակի տիրոջ ցանկութիւնն էր իսկական նամակը ցոյց տալ «Մշակ» խմբագրութեան և ոչ ինչ յանձնել, ուստի և պարտք համարեցինք անմիջապէս մի նամակով յայտնել այդ մասին «Մշակ» խմբագրութեան և խնդրել, որ հաճին նշանակել տեղ և ժամանակ, ուր կարող լինէինք ցոյց տալ իսկական նամակը և համոզել նոցա, որ սխալուած են եղել վերոյիշեալ լուրը տպելիս և մեզ վերայ տարապարտ մեղադրանքներ բարդելիս:

Բայց փոխանակ մեր առաջարկութեանը պատասխանելու, «Մշակ» խմբագրութիւնը հարկ էր համարել մի նոր յօդուածով իւր զայլույթը յայտնել տէր Խորէնի վերաբերմամբ, թէ ինչպէս նա վստահացել էր նամակը մեզ և ոչ թէ իրան՝ «Մշակ» խմբագրութեան ուղարկել: Այդ յօդուածում ալ ժամ «Մշակ» մասամբ խոստովանում էր իւր սխալը, այն է որ խարդախողը ոչ թէ եղել է «Լուսնայի խմբագրութիւնը», այլ Ստեփաննոս Նազարեանցն է եղել սխալուողը Սեննեքերիմի տեղ գրելով Գրիգոր Արծրունի:

«Մշակ» այս խոստովանութիւնից յետոյ մենք այլ

ևս աւելորդ համարեցինք յիշեալ նամակի լուսատիպը հրատարակել «Լուսաբոյի մէջ»:

Այստեղ մեզ հետաքրքրողը այն չէ, թէ՛ «ցանցառ և թեթևամիտ»՝ Գրիգոր թէ՛ Սենեքերիմ Արծրունուն է համարում Ստեփաննոս Նազարեանցը, այլ այն, որ մենք երկու գէպքումն էլ յանցաւոր գուրս եկանք, թէ՛ ինչպէս վստահացանք հրատարակութեան տալ հայոց կուռքերից մէկին վերաբերեալ մի գրուածք և մինչև այժմ էլ կրում ենք մեզ վերայ այդ ծանր յանցանքի արժանի պատիժը՝ ամենօրեայ հայհոյանքներ «Մշակի» մէջ:

ԳՐԻԳ Ս. ԳՍԷ. ԱՂԱՆԵԱՆՑ

† ԱՐՁԱԿ ՏԵՐ ՄԻՔԵԼԵԱՆՑ

Տարւոյս Յունիս ամսի 25-ին Շուշում երկարատև հիւանդութիւնից լետոյ վախճանուեցաւ Արշակ Տէր Միքելեանը երիտասարդ հասակում: Հանգուցեալը պատկանում էր այն կարգի անձանց, որոնք գլխովին նուիրւում են իրենց ընտրած ասպարէզին և հաջողատ մնում իրենց կոչման, չնայելով որ շրջապատն ու մարդիկ միմիայն յուսաբեկ են անում մարդուս: Հանգուցեալի կեանքը ամբողջովին կռիւ է եղած. ունի հետ է եղել այդ կռիւը և ինչպէս է ելել նա այդ կռուից, կիսօսենք այն ժամանակ, երբ առիթ կունենանք գրել նորա երկասիրութիւնների մասին:

Հանգուցեալը բնիկ Շուշեցի էր. ծնուած 1864 փետրուարի 1-ին: Մանկութեան հասակում, ինչպէս ինքն էր ասում, «կգրնական դաստիարակութիւնն ստացել է իր մօրից, սովորելով նրանից հայոց լեզու, գրաբառ և այլն. 1881 թ. աւարտել է Շուշուայ քաղաքային ուսումնարանը, ապա 1883 թ. գնում է ս. Էջ-